Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի №4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Պատմության (3 դասաժամ), Հասարակագիրության (1դասաժամ), Ֆիզիկա (5դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
1.դիմում՝ (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
2. բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
3. անձը հաստատող փաստաթուղթ,
4.«Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում
5. ինքնակենսագրություն (Ձև 5),
6. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ:
8.հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ

Ներկայացվող փաստաթղթերի բնօրինակները համեմատվում են պատճենների հետ, բնօրինակները վերադարձվում է մասնակցին:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ **սեպտեմբերի 23-ից մինչև հոկտեմբերի 6-ը ներառյալ ,** ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **հոկտեմբերի 10-ին ժամը 14:00-ին** , ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի №4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում :

Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Արթիկ, Հակոբյան փ. 8:

Հեռախոս՝ 094249320 :